ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2014

1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1.1 ՀՀ համայնքների տեղեկատվական բազայի ստեղծում

Գնահատելով համայնքների վերաբերյալ տեղեկատվական բազայի կարևորությունը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 54-Ա հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության համայնքների տեղեկատվական բազայի արդիականացման նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքներից տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման» կարգը: Կարգով նախատեսվել է մարզպետարանների միջոցով համայնքներից տեղեկատվության հավաքագրում, ամփոփում և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միջոցով մուտքագրում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից սպասարկվող Armdevinfo էլեկտրոնային ծրագիր: Իրականացված աշխատանքների արդյունքում 2014 թվականին հնարավորություն կընձեռնվի յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ դինամիկ կտրվածքով ունենալու http://www.armdevinfo.am/ կայքում տեղադրված էլեկտրոնային բազա: Ծրագրի գործիքակազմի օգտագործումով կմեծանան տարբեր տեսակի վերլուծություններ իրականացնելու հնարավորությունները (աղյուսակներ, գրաֆիկներ, քարտեզներ և այլն):

1.2 Մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանության մշակում

Նախարարության և տեղական փորձագետների համատեղ աշխատանքի արդյունքում մշակվել է մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանություն: Մեթոդաբանության հիմնական նպատակը ռեսուրսային հնարավորությունները (արտադրական ենթակառուցվածքներ, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հնարավորություններ, և այլն) հաշվի առնելով մարզի հետագա զարգացման ներուժի գնահատումն է:

Մեթոդաբանության ամբողջականացման աշխատանքները կիրականացվեն և կավարտվեն 2014 թ. ընթացքում:

1.3 Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ առաջարկություններ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից 2013թ. ընթացքում մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ:

Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի աջակցությամբ հաշվետու ժամանակահատվածում մշակվել է նաև Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետագա գործունեության հայեցակարգը, որը, ըստ էության, տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման այլընտրանքային մոտեցում է:

1.4 Փորձնական տարածքային զարգացման ծրագրերի իրականացում

2013թ. մեկնարկել է ԵՄ-ի կողմից իրականացվող «Աջակցություն տարածքային կառավարման նախարարությանը տարածքային նպատակային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում» (Support to the EU Delegation to Armenia and RA Ministry of Territorial Administration for preparation of actions in regional development) ծրագիրը, որը իրականացվում է ECORYS կազմակերպության կողմից ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ: Նախատեսվում է մշակել փորձնական տարածքային նպատակային զարգացման ծրագրեր, որոնք այնուհետև կֆինանսավորվեն ԵՄ-ի կողմից (5 մլն եվրո արժողությամբ) իրականացվելիք PRDP ծրագրի շրջանակներում:

1.5 Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի գնահատման մոտեցումների մշակում

Նախարարության և տեղական փորձագետների համատեղ աշխատանքի արդյունքում 2013 թվականի ընթացքում մշակվել է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ամփոփ համաթիվը հաշվող մեթոդաբանություն: Մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս հաշվարկելու համայնքում իրականացված կապիտալ ներդրումների արդյունավետությունը տվյալ համայնքի աղքատության կրճատման գործընթացում:

Մեթոդաբանության կատարելագործումը հանդիսանում է շարունակական աշխատանք և այն կներառվի նաև նախարարության հետագա ծրագրերում:

1.6 Մարզային զարգացման ծրագրերի մշակում

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 38 արձանագրային որոշման պահանջներին համաձայն՝ ՀՀ կառավարության հավանությանն է ներկայացվում յուրաքանչյուր մարզի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագերը: Այս առումով հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ՀՀ Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման երկրորդ՝ 2014-2017 թվականների քառամյա ծրագրերը:

1.7 Մարզային զարգացման ծրագրերի աշխատանքային պլանի կազմում և մոնիթորինգի իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի փետրվարի 26-ի N 25-Ա հրամանով հաստատվել են մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերով նախատեսված 2013 թվականին իրականացվելիք տարեկան աշխատանքային պլանները: Տարեկան աշխատանքային պլանի հիման վրա իրականացվել և նախարարության կայք-էջում հրապարակվել է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կիսամյակային հաշվետվությունների մոնիթորինգը:

1.8 Մարզերի սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող ընթացիկ տեղեկանքների կազմում

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել և նախարարության կայք-էջում հրապարակվել են ՀՀ մարզերի սոցիալ տնտեսական իրավիճակը բնութագրող տեղեկանքները: Տեղեկանքները պարունակում են ՀՀ մարզերի ֆինանսական, քաղաքաշինական, բնակկոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, ենթակառուցվածքների, գյուղատնտեսության, բնապահպանության, հողօգտագործման և հողաշինության, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի և սպորտի բնագավառներում առկա իրավիճակների, կատարված աշխատանքների, ինչպես նաև առկա հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվություններ:

1.9 2013 թվականին իրականացված հրատապ ծրագրեր

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքներում մի շարք հրատապ խնդիրների լուծման նպատակով ՀՀ պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ մարզպետարաններին ՀՀ կառավարության տարբեր որոշումներով հատկացվել է ընդհանուր առմամբ շուրջ 9,2 մլրդ դրամ գումար:

Ֆինանսական միջոցները հիմնականում ուղղվել են կրթական, նախադպրոցական, մշակութային, առողջապահական հաստատությունների, համայնքային կենտրոնների, ճանապարհաշինության, ջրամատակարարման, գազիֆիկացման, ոռոգման ցանցերի, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգմանն ու վերակառուցմանը:

Նախարարության կողմից իրականացվել է մարզպետարաններից համապատասխան ծրագրերի հավաքագրման, ամփոփման և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացման գործառույթ: Աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով հսկողություն է սահմանվել նախագծային և շինարարական պայմանագրերի՝ ժամանակին և օրենսդրության պահանջին

համապատասխան կնքման, շինարարական աշխատանքների՝ սահմանված ժամկետում ավարտման, ինչպես նաև կատարված աշխատանքների դիմաց պատշաճ վճարումներ կատարելու ուղղությամբ: Տնտեսված գումարների վերաբաշխման նպատակով մի շարք փոփոխություններ են իրականացվել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում: Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են նաև հատուկ կարգեր՝ մի շարք ծրագրերով (մասնավորապես՝ բնակարանաշինության) նախատեսված միջոցների արդյունավետ բաշխման նպատակով:

1.10 Վարչական վերահսկողություն

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի տվյալ տարվա վարչական հսկողության իրականացման աշխատանքային ծրագրերը կազմելու նպատակով մարզպետարաններից հավաքագրվել է համայնքների ցանկ, որը համեմատվել է Վերահսկիչ պալատի և ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական վերահսկողության վարչության աշխատանքային ծրագրերով նախատեսված համայնքների ցանկի հետ՝ բացառելու համար նույն համայնքներում նույն բնագավառում իրականացվող հսկողությունների կրկնությունը (առկա է եղել մեկ համընկնում, որը մարզպետի հետ քննարկումների արդյունքում փոփոխվել է): Նույն համայնքի նույն բնագավառում երկու տարի անընդմեջ հսկողության իրականացումը բացառելու նպատակով տվյալ տարվա աշխատանքային ծրագիրը համեմատվել է նաև նախորդ տարվա վարչական հսկողության աշխատանքային ծրագրի հետ, այնուհետև ծրագիրը ներկայացվել է տարածքային կառավարման նախարարի հաստատմանը: Անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով աշխատանքային ծրագրում իրականացվել են նաև փոփոխություններ:

Արդյունքում 2013 թվականին ՀՀ մարզերում վարչական հսկողություն է իրականացվել 292 համայնքներում:

Հսկողության արդյունքների հիման վրա կազմվել են եռամսյակային հաշվետվություններ, որոնք տեղադրվել են նախարարության ինտերնետային կայք-էջում:

Նախարարության կողմից հսկողություն է սահմանվել արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ մարզպետների կողմից իրականացված աշխատանքների նկատմամբ:

Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերվել են «Տեղական ինքնակառավարման մասին», «Գնումների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Քաղաքաշինության մասին» և այլ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի պահանջների չկատարմանը:

ՀՀ մարզպետների կողմից վարչական հսկողության իրականացման ընթացակարգը հստակեցնելու և գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում համապատասխան լրացում է իրականացվել Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրում: Մասնավորապես, միասնականացվել է վարչական հսկողության գործընթացը:

Հսկողության իրականացման գործընթացի միասնականության ապահովման նպատակով մշակվել և ՀՀ փոխվարչապետի ու համապատասխան նախարարի հրամաններով հաստատվել են նաև հարցաշարեր, որով սահմանված են ՏԻՄ մարմնի այն լիազորությունները, որոնց նկատմամբ մարզպետը պետք է իրականացնի հսկողություն:

1.11 Երևան քաղաքի ավագանու որոշումների և մարզպետների ընդունած գերատեսչական իրավական ակտերի նկատմամբ իրավական հսկողության իրականացում

2013 թվականին իրավական հսկողություն է իրականացվել Երևան քաղաքի ավագանու թվով 104 որոշումների և մարզպետի թվով 4486 իրավական ակտերի նկատմամբ: Հսկողության արդյունքների հիման վրա արձանագրվել են իրավական տեխնիկայի պահանջների չկատարման մի շարք դեպքեր: Հանձնարարվել է ակտերը համապատասխանացնել գործող օրենսդրության կանոններին և վերահսկվել է գործառույթի կատարման ընթացքը:

Ակտերը վերլուծվել են նաև ըստ ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ 728 հրամանագրում նշված մարզպետի գործունեության իրականացման բնագավառների՝ ֆինանսներ, քաղաքաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն, տրանսպորտ և ճանապարհաշինություն, գյուղատնտեսություն և հողօգտագործում, կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն և այլն: Ընդունած որոշումների մեջ մեծ թիվ են կազմում սոցիալական բնագավառներին առնչվող որոշումները:

2013թ. հսկողություն է սահմանվել նաև մարզպետների ընդունած գերատեսչական իրավական ակտերը մարզպետարանների ինտերնետային կայք-էջերում պարտադիր տեղադրելու ուղղությամբ:

1.12 Ավագանու որոշումների նկատմամբ մարզպետարանների կողմից իրականացված իրավական հսկողություն

2013 թվականին ամփոփվել և նախարարության ինտերնետային կայք-էջում տեղադրվել են նաև համայնքի ավագանու որոշումների նկատմամբ մարզպետարանների կողմից իրականացված իրավական հսկողության արդյունքները:

2013 թվականի ընթացքում համայնքների կողմից մարզպետարան է ներկայացվել թվով 24736 որոշում, որից ոչ իրավաչափ է համարվել թվով 1199 իրավական ակտ, որի տեսակարար կշիռը կազմում է 4.8 %:

1.13 Մարզպետների գործունեության գնահատում

2013 թվականին ՀՀ կառավարության 09.05.2009 թվականի թիվ 562-Ն որոշմամբ նախատեսված ընթացակարգին համապատասխան՝ գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմիններից, ինչպես նաև նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներից հավաքագրվել են մարզպետների 2012 թվականի գործունեության արդյունքների գնահատականները, որոնք այնուհետև ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ կառավարություն:

Գործընթացի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով 2013թ. ՀՀ կառավարության թիվ 562-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և լրացում, որի արդյունքում մարզպետներն այսուհետ կգնահատվեն նաև ինֆոտեխնոլոգիաների բնագավառում իրականացված աշխատանքների համար: Վերոգրյալով պայմանավորված՝ փոփոխություն է կատարվել նաև ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. դեկտեմբերի 20-ի թիվ 07-Ն հրամանում, որը ստացել է պետական գրանցում:

1.14 Մարզխորհրդի նիստեր

Մարզի արդյունավետ կառավարման և զարգացման գործընթացում մարզխորհուրդների դերակատարումը բարձրացնելու նպատակով նախարարության կողմից հաշվետու ժամանակահատվածում լրացում է իրականացվել «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրում՝ ավելացվելով նոր գլուխ՝ վերջիններիս գործառույթների նկարագրման վերաբերյալ:

Իրականացված լրացումների արդյունքում վերապահվել է վերջինիս ուղերձներ ընդունելու իրավասություն, սահմանվել են մարզխորհրդի նիստերի անցկացման հաճախականությունը, թափանցիկությունն ու հրապարակայնությունը, ընդլայնվել են մարզխորհրդի նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի շրջանակները, մասնավորապես՝ նախատեսելով պարտադիր քննարկման առարկա դարձնել մարզի կարճաժամկետ և երկարաժամկետ բյուջետային հայտերը, մարզի զարգացման ծրագրերը և այլն:

Միաժամանակ նախարարության աշխատակիցները պարտադիր մասնակցել են բոլոր նիստերին և արդյունքների վերաբերյալ ներկայացրել են զեկուցագրեր:

1.15 Գենդերային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքներ

Համայնքներում գենդերային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է «Լավագույն համայնքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությունը:

Գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով լրամշակվել է համայնքների ընտրության կարգը:

Նախարարությունը հաշվետու ժամանակահատվածում համակարգել է համայնքներում տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող ծրագրերը՝ միևնույն համայնքում միանման ծրագրի իրականացումը բացառելու նպատակով: Առկա են եղել

նաև համատեղ իրականացված ծրագրեր, մասնավորապես՝ Ասիական զարգացման բանկի և «Կովկասի ինստիտուտ հիմնադրամի» հետ համատեղ մշակվել է համայնքներում գենդերային քաղաքականության արդյունավետության բարձրացման վերաբերյալ ձեռնարկ: Ծրագրի արդյունքում ձեռնարկի միջոցով վերապատրաստումներ են իրականացվել 4 մարզերի (Արագածոտն, Գեղարքունիք, Կոտայք, Տավուշ) 50 համայնքներում:

Եվրոպական միության և Միացյալ Ազգերի Զարգացման Ծրագրի հետ համատեղ իրականացվել է «Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանում Հայաստանում. կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում» ծրագիրը, որի նպատակն է աջակցել Հայաստանում տեղական մակարդակում գենդերային հավասարության խթանմանը:

1.16 Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացված աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում նախարարությունը սերտ համագործակցել է երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում գործող միջազգային կառույցների հետ, մասնավորապես՝ UNICEF, Save the children, World Vision և այլն:

Նախարարության կողմից հսկողություն է սահմանվել նաև մարզերում երեխաների ծնունդ չգրանցելու դեպքերի բացահայտման և գրանցման գործընթացի նկատմամբ:

1.17 Ինտեգրված սոցիալական ծառայություններ

Նախարարության կողմից որոշակի աջակցություն է ցուցաբերվել նաև ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ շենքային պայմանների տրամադրման գործընթացին:

2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2.1 Համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման բարելավման և կատարելագործման առումով 2013թ. իրականացված միջոցառումներ

Տարեսկզբին իրականացվել է 2013թ. համայնքային բյուջեների եկամուտների պլանային ցուցանիշների (մասնավորապես գույքահարկի, հողի հարկի, տեղական ու պետական տուրքերի և գույքի վարձակալությունից ստացված եկամուտների) մանրակրկիտ վերլուծություն, որի արդյունքում բազմաթիվ (մոտ 400) համայնքներում ավագանիների կողմից վերանայվել են իրենց բյուջեները և հաստատվել ավելի իրատեսական բյուջեներ: Ինչպես 2013թ., այնպես էլ 2014թ. համայնքների բյուջեները օրենսդրությամբ սահմանված ժամկետում հաստատվել են:

Իրականացվել է պարբերական մոնիթորինգ համայնքների կողմից կուտակած աշխատավարձի գծով պարտքերի մարման գործընթացի նկատմամբ: Առանձնակի ուշադրություն է դարձվել նաև ընթացիկ աշխատավարձերի ժամանակին վճարման, լրացուցիչ պարտքեր չկուտակելու վրա:

Աշխատավարձերի նախկին տարիների կուտակած պարտքերի մարման մասով արձանագրվել է հետևյալ արդյունքը. 2008թ. հունվարի 1-ի դրությամբ ձևակերպված շուրջ 2.3 մլրդ դրամ պարտքերից 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է մոտ 33.3 մլն դրամ պարտք: 2013թ. ընթացքում պարտքի մարում է կատարվել 68.9 մլն դրամի չափով:



2.2 Համայնքային բյուջեների եկամուտների ցուցանիշներ

2013թ. ՀՀ համայնքների բյուջեների փաստացի մուտքերը նախատեսված 107.4 մլրդ դրամի դիմաց կազմել են 105.7 մլրդ դրամ, (կատարողականը՝ 98.4%): 2012 թվականի համեմատությամբ ընդամենը եկամուտների հավաքագրման ցուցանիշը աճել է 10.8 %-ով կամ 10.3 մլրդ դրամով:

Սեփական եկամուտները կազմել են ընդամենը եկամուտների 29%-ը: Սեփական եկամուտները նախատեսված 31.2 մլրդ դրամի դիմաց փաստացի կազմել են 30.25 մլրդ դրամ (կատարողականը՝ 97 %): 2012 թվականի համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը աճել է 6.5 %-ով կամ 1.85 մլրդ դրամով:

Հողի հարկի հավաքագրումը կատարվել է 95.9%-ով: Նախատեսված 4.33 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4.16 մլրդ դրամ: 2012 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը նվազել է 1.3.%-ով կամ 55.1 մլն դրամով:

Գույքահարկի հավաքագրումը կատարվել է 100.8%-ով: Նախատեսված 12.66 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 12.77 մլրդ դրամ: 2012 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 5.6 %-ով կամ 677.5 մլն դրամով:

Տեղական տուրքերի հավաքագրումը կատարվել է 96.7 %-ով: Նախատեսված 3.6 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 3.5 մլրդ դրամ: 2012 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 15.6 %-ով կամ 471.3 մլն դրամով:

Պետական տուրքերի հավաքագրումը կատարվել է 97.6%-ով: Նախատեսված 719.0 մլն դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 702.1 մլն դրամ: 2012թ. համեմատությամբ պետական տուրքերի հավաքագրման ցուցանիշը նվազել է 1.8 %-ով, կամ 13.1 մլն դրամով:

Գույքի վարձակալությունից եկամուտների հավաքագրումը կատարվել է 93.3 %-ով: Նախատեսված 3.3 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 3.1 մլրդ դրամ: 2012թ. համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 0.2 %-ով կամ 6.6 մլն դրամով:


Ընդամենը եկամուտներ
Սեփական եկամուտներ
40,692,660
/3,477,562/
44,170,222
/8,430,157/
52,600,379
/31,232,316/
83,832,695
/3,660,620/
87,493,315
/7,930,127/
95,423,442
/10,310,317/
105,733,760
17,342,862
/1,194,385/
18,537,247
/ 3,150,130 /
21,687,377
/ 2,140,111 /
23,827,488
/1,169,823/
24,997,311
/ 3,401,635 /
28,398,946
/1,854,772 /
30,253,718
2007
2008
2009
2010
2011
2012
2013


Սեփական եկամուտներ
17,342,862
/1,194,385/
18,537,247
/3,150,130/
21,687,377
/2,140,111/
23,827,488
/1,169,823/
24,997,311
/3,401,635/
28,398,946
/1,854,772 /
30,253,718
Հարկային եկամուտներ
(հողի հարկ+գույքահարկ)
10,744,373
/1,194,385/
11,628,014
/3,588,503/
15,216,517
/625,535 /
15,842,052
/385,686 /
16,227,738
/71,991 /
16,299,729
/622,418/
16,922,147
Տուրքեր (պետական տուրքեր+ տեղական տուրքեր)
2,060,147
/158,404/
2,218,551
/124,980/
2,343,531
/734,582/
3,078,113
/257,282/
3,335,395
/400,703/
3,736,098
/458,304/
4,194,402
Գույքի վարձակալությունից եկամուտներ
1,922,646
/-4,977/
1,917,669
/-11,817/
1,905,852
/244,382/
2,150,234
/413,453/
2,563,687
/491,585/
3,055,272
/6,606/
3,061,878
2007թ.
2008թ.
2009թ.
2010թ.
2011թ.
2012թ.
2013թ

2.3. Համայնքների բյուջեներին պետական աջակցության համակարգի արդյունավետության բարձրացում

Համայնքների բյուջեներին պետական աջակցության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով փոփոխություններ են արվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում: «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ գործող օրենքի համաձայն՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների չափը ըստ առանձին համայնքների բյուջեների՝ հաշվարկվում էր՝ վերջիններս տարանջատելով 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների և 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների: Արդյունքում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող բոլոր համայնքները (շուրջ 200 համայնք) ստանում էին հավասարաչափ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը սահմանվում էր Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին տվյալ տարվա օրենքով: Միևնույն ժամանակ հանրապետության 33 համայնքներում, որոնք ունեին 300-ից ավելի բնակչություն, 2012թ. համար նախատեսված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը պակաս էր 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների համար սահմանված գումարից: Նշված խնդիրները կարգավորելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն էր ներկայացվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ընդունվել է:

2.4. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող միջոցառումների իրականացում

- 2013 թվականի մարտի 21-ին ՀՀ կառավարությունը թիվ N271-Ն որոշմամբ հաստատել է «Մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների հողի հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց և ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված այդ համայնքներում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու ծրագիրը, որի նպատակն է՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացվող՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և տվյալ տարվան նախորդող վերջին հինգ տարիների ընթացքում հակառակորդի կողմից գնդակոծման դեպքեր արձանագրված հողատարածքներ ունեցող սահմանամերձ համայնքների (այսուհետ՝ ծրագրում ընդգրկված համայնքներ) հողի հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված համայնքներում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելը, որի արդյունքում առավել նպաստավոր պայմաններ կստեղծվեն նշված համայնքների բնակիչների համար, ինչը կնպաստի սահմանամերձ համայնքների հողերի արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների և գյուղացիական տնտեսություն-ների եկամուտների ավելացմանը.

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների պաշտպանունակության բարձրացումը և դրանց սոցիալ-տնտեսական զարգացումը, ծրագրում ընդգրկված համայնքների սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմքերի ստեղծումը, համալիր միջոցառումների իրականացման միջոցով դրանց ամրապնդումն ու կայուն զարգացման ապահովումը:

Ծրագիրը շարունակական է:

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2013 թվականի մայիսի 12-ի կարկտա-հարության հետևանքով մարզի համայնքների հողի հարկ և հողի վարձակալության վճար վճարող, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված այդ համայնքներում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով 2013 թվականի հունիսի 6-ին ՀՀ կառավարությունը թիվ N652-Ն որոշմամբ հատկացվել են ֆինանսական միջոցներ, որի նպատակն է առավել նպաստավոր պայմաններ ստեղծել համայնքների վնասված հողերի հետագա արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացման համար:

2.5. ՀՀ համայնքներում գնումների իրականացման գործընթացի կանոնակարգում

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ՀՀ համայնքներում գնումների գործընթացի հետ կապված առկա խնդիրները վեր հանելու նպատակով՝ ՀՀ մարզպետների, համայնքների ղեկավարների հետ քննարկել է համայնքներում գնումների իրականացման գործընթացը, վեր են հանվել ոլորտում առկա խնդիրները և դժվարությունները, քննարկվել են դրանց լուծման ուղիները: Բարձրացված խնդիրների քննարկման արդյունքում առաջարկությունները ներկայացվել են պետական լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելիս վերջիններս հաշվի առնելու համար:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության նիստերի դահլիճում կազմակերպվել է խորհրդակցություն՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ֆինանսների նախարարության, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի և համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Մշակվել է նաև «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» հանրային գնումների կազմակերպման պատվիրատուներին օժանդակող ուղեցույցը, որն ուղարկվել է ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին:

Առաջարկվել է այդ ուղեցույցը տեղադրել մարզպետարանների պաշտոնական կայք-էջերում և տեղյակ պահել համայնքների ղեկավարներին: Վերոնշյալ ուղեցույցն արդեն տեղադրված է ՀՀ տարածքային կառավարման նախարարության, մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք-էջերում:

ՀՀ համայնքներում գնումների իրականացման գործընթացի կանոնակարգման նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը համագործակցելով «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության և «Ամերիա» ՓԲԸ-ի հետ իրականացրել է համայնքներում գնումների իրականացման գործընթացի փաստացի վիճակի ուսումնասիրություն և վերլուծություն:

Ուսումնասիրության նպատակն էր՝ ընտրված համայնքներում վեր հանել գնումների գործընթացի իրականացման տարբեր փուլերի ընթացքում առաջացած(ող) խնդիրները, բացահայտել գնումների գործընթացի առանձնահատկությունները համայնքներում, որոնք պայմանավորված են համայնքի բնակչության թվաքանակով, քաղաքային/գյուղական համայնք լինելու հանգամանքով, աշխարհագրական դիրքով, տարեկան գնումների ծավալով, նախկին փորձառությամբ և այլն: Բացի վերը նշվածից ուսումնասիրությունը պետք է կենտրոնանար «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի կիրառման հետ կապված համայնքներում առաջացող խնդիրների վրա, ինչպես նաև ներառի ՏԻՄ-երի կողմից գնումների իրականացման գործընթացի հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկություններ և այդ առաջարկություններից բխող միջոցառումներ:

Իրականացված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՏԻՄ գնումների գործընթացի հիմնական խնդիրները վերաբերվում են փոքր և միջին (ավելի շատ՝ փոքր) համայնքներին, այն դեպքում, որ մեծ համայնքները հիմնականում կարողանում են օգտագործել իրենց միջոցները խնդիրները լուծելու նպատակով:

Ամփոփելով հետազոտության արդյունքները կարելի է եզրակացնել, որ փոքր համայնքներում առկա են հետևյալ հիմնական խնդիրները՝

- Գիտելիքի և փորձի պակասությունը, ինչն առաջ է բերում մի շարք խնդիրներ՝ ընդհուպ մինչև գնումը շրջանցելու նպատակով հնարավոր ճանապարհների որոնումը և կիրառումը:
- Տեղեկատվության պակասը: Փոքր գյուղական համայնքների դեպքում մասնակիցների գրեթե կեսը տեղյակ չէր և/կամ դժվարանում էր հիշել գնման գործընթացը կարգավորող օրենքն ու ենթաօրենսդրական ակտերը, օժանդակ նյութերը, ուղեցույցները:
- Օրենքի և օրենսդրական ակտերի հստակեցումների պակասը, ինչի արդյունքում վեճեր են առաջանում այլ մարմինների հետ կապված այս կամ այն կետի մեկնաբանության առնչությամբ:

ՀՀ համայնքներում «Ամերիա» ՓԲԸ-ի կողմից գնումների իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքների հիման վրա եղել են հետևյալ առաջարկությունները՝

1.Համայնքների միջև համագործակցության հաստատում,

2. Տեխնիկական մասնագետների բազայի ստեղծում,

3.Միջհամայնքային և ներհամայնքային փորձի փոխանակմանն ուղղված միջոցառումների կազմակերպում,

4.Վերապատրաստման դասընթացների իրականացում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մասնավորապես չորրորդ առաջարկությունը՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013թ.դեկտեմբերի 24-ի «Համայնքային գնումների կազմակերպման և իրականացման բնագավառում համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագիրը հաստատելու մասին» N 166-Ա հրամանով հաստատված ծրագրով հնարավոր է դարձել 2014թ ընթացքում վերապատրաստելու ՀՀ մարզերի քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերում համայնքային գնումների կազմակերպման և իրականացման պատասխանատու համայնքային ծառայողների:

2.6. Համայնքների համար գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական միասնական բանկի ստեղծում

Պայմանավորված «Հողի հարկի և գույքահարկի գծով առաջացած ապառքների մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների փաթեթի ընդունմամբ՝ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ իրականացնելու ՀՀ համայնքների կողմից վարվող հողի հարկի և գույքահարկի շտեմարաններում (բազաներում), ինչպես նաև միասնական տեղեկատվական համակարգում: «Վեկտոր Պլյուս» կազմակերպության կողմից մշակվել է բարեփոխված ծրագրային փաթեթ, որը ներդրվել է ՀՀ համայնքներում, ինչպես նաև ՀՀ մարզպետարաններում և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում՝ արդյունքում ձևավորելով միասնական տեղեկատվական համակարգ:

2012թ. ընթացքում շարունակվել է մի շարք համայնքների կողմից հողի հարկի և գույքահարկի բազաները միասնական վարելու հաջող փորձը: ՀՀ Սյունիքի մարզի «Սիսիանի համայնքների միության» հաջող փորձը 2013 թվականին ներդրվել է նաև հանրապետության մի շարք համայնքներում:

2.7. Համայնքի զարգացման ծրագրին՝ որպես համայնքի ռազմավարական պլանավորման գլխավոր փաստաթղթին, ներկայացվող պահանջների սահմանում

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը: Նույն օրենքի 53-րդ հոդվածով նկարագրվում է համայնքի զարգացման ծրագրի ընդունման որոշակի ընթացակարգ: Սակայն ելնելով այն հանգամանքից, որ յուրաքանչյուր համայնքում յուրովի են մոտենում համայնքի ծրագրին ներկայացվող պահանջների կազմին և բովանդակությանը՝ անհրաժեշտություն է առաջացել օրենսդրորեն սահմանելու այդ պահանջները:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Բացի այդ, մշակվել է համայնքի զարգացման ծրագրի կազմման մեթոդական ուղեցույցը: Այն մշակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության, Վորլդ Վիժն Հայաստանի ծրագրերի շրջանակներում՝ «Հայաստանի ֆինանսիստների միավորում» ՀԿ, «Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչության (հատկապես՝ բնակչության մասնակցության մասով) փորձագետների հետ համատեղ:

Թվով 4 համայնքներում և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում կազմակերպվել են մեթոդական ուղեցույցի քննարկումներ:

Մեթոդական ուղեցույցը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո կներկայացվի ՀՀ համայնքներին:

2.8. Վարչատարածքային բարեփոխումների իրականացում, համայնքների խոշորացմանն ուղղված գործնական քայլերի իրականացում

Ի կատարումն ս.թ. հունիսի 5-ին կայացած ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի նիստում տրված հանձնարարականի՝ նախարարության կողմից քննարկվել են համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի երկու տարբերակներ՝ ծրագրային և վարչական:

Ծրագրային փունջը նշանակում է որևէ ծրագրի (հիմնականում՝ տնտեսական ներուժ պարունակող) և այլ էական նշանակություն ունեցող հանգամանքների (օրինակ՝ արդյունավետ բյուջետավարում) շուրջ խոշորացումը: Օրինակ, Զառիթափի ծրագրային փնջի համար հիմք են հանդիսացել Ամուլսարի ընդերքօգտագործման ռեսուրսային հնարավորությունները, Վայքի և Գորիսի համար՝ արդյունավետ բյուջետավարումը:

Իսկ վարչական փունջը պարզ պայմանների առկայությամբ (համայնքների միջև կարճ հեռավորություն, բնակիչների համատեղելիություն և մենթալություն, նախկինում համատեղ կառավարման մարմնի առկայություն և այլն) համայնքների խոշորացումն է:

Համայնքների ծրագրային հիմնավորմամբ խոշորացման համար ընտրվել է թվով 14 համայնքային փունջ: Դրանք են՝ ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր (Ուրցաձոր, Շաղափ, Լանջանիստ, Լուսաշող), ՀՀ Լոռու մարզի Սարչապետ (Սարչապետ, Պետրովկա, Նորաշեն, Ապավեն, Արծնի), Թումանյան (Թումանյան, Մարց, Քարինջ, Լորուտ, Շամուտ, Աթան, Ահնիձոր), ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան (Բյուրեղավան, Արզնի, Նուռնուս), ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշեն (Պեմզաշեն, Լեռնակերտ, Հայրենյաց, Հայկասար, Տուֆաշեն), Ջաջուռ (Ջաջուռ, Ջաջուռավան, Լեռնուտ, Մեծ Սարիար, Կրաշեն), ՀՀ Սյունիքի մարզի Սառնակունք (Սառնակունք, Ծղուկ, Գորայք, Սպանդարյան), Տաթև (Տաթև, Հալիձոր, Հարժիս, Շինուհայր, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի), Գորիս (Գորիս, Ակներ, Վերիշեն, Քարահունջ), Մեղրի (Մեղրի, Ագարակ, Ալվանք, Գուդեմնիս, Լեհվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն), ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ (Զառիթափ, Սարավան, Արտավան, Նոր Ազնաբերդ, Խնձորուտ, Բարձրունի, Սերս, Մարտիրոս, Գոմք), Վայք (Վայք, Արին, Ազատեկ, Զեղեա, Փոռ), Ջերմուկ (Ջերմուկ, Գնդեվազ) և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան (Դիլիջան, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Աղավնավանք, Խաչարձան, Հովք):

Համայնքների խոշորացման պիլոտային վերոնշյալ 14 ծրագրերը ներկայացվել են ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության աշխատակազմեր: ՀՀ կառավարության կողմից դրանք ընդունվել են ի գիտություն:

2.9. Հողերի կառավարման արդյունավետության բարձրացում

- Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի անհրաժեշտությունը պայմանավորված է այն փաստով, որ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացից հետո և դրան հաջորդած տարիների ընթացքում իրականացված հողերի օտարումների արդյունքում ձևավորվել է մի իրավիճակ, երբ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերին հարակից միջնակները, օգտագործման համար պիտանի, բայց համայնքում սեփականաշնորհված հողաբաժիններից պակաս մակերես ունեցող արժեքավոր հողամասերը չեն օգտագործվում կամ օգտագործվում են մասնակիորեն: Առանձին համայնքներում սեփականաշնորհված հողաբաժնի չափը կազմում է 3-ից 7 հեկտար, հետևաբար նշված չափից պակաս համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը գործող կարգի համաձայն՝ հնարավոր չէ օտարել: Այն կարելի է օտարել բացառապես ուղղակի վաճառքով՝ հարևան սեփականատերերից մեկին, իսկ եթե տվյալ հողամասը ձեռք բերելու ցանկություն ունեն մեկից ավելի անձինք՝ աճուրդով օտարել չի կարելի՝ համաձայն ներկայումս գործող կարգի: Առաջարկվող նախագծի ընդունմամբ կմեծանա գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետությունը, գյուղատնտեսության շրջանառության մեջ կընդգրկվեն նոր հողամասեր, կմեծանա հողերի օտարման գործընթացի թափանցիկությունը:
- Տարեվերջում մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N1477-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի անհրաժեշտությունը պայմանավորված է այն փաստով, որ համաձայն գործող օրենսդրության, հողամասերը օգտագործման են տրամադրվում մրցութային կարգով, որի արդյունքում կնքվող պայմանագրերը ենթակա են վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման, որոնց համար

(ներառյալ չափագրումը) պահանջվող ծախսերը մի քանի անգամ գերազանցում են տվյալ հողամասի հողի հարկի դրույքաչափը: Իսկ գյուղացիական տնտեսությունները ցանկանում են գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ օգտագործման իրավունք ձեռք բերել մինչև 3 տարի ժամկետով:

Առաջարկվող նախագծի ընդունմամբ կմեծանա գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետությունը, գյուղատնտեսության շրջանառության մեջ կընդգրկվեն նոր հողամասեր:

- Մշակվել է «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների համար օգտագործվող հողամասերի սեփականատերերին տրված է արտոնություն, այն է՝ վերջիններս հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը համայնքային բյուջե են մուծում մեկ տարվա ժամկետում: Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման և երկրում գյուղատնտեսության զարգացման խթանման նպատակով խիստ կարևորվում է նաև գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունների գործարար ակտիվության զարգացումը: Սակայն վերը նշված ոլորտների տնտեսությունները՝ ջերմոցներ, անասնաշենքեր, թռչնանոցներ, գյուղատնտեսական մթերք վերամշակող արտադրամասեր, արհեստական լճակներ կառուցելու համար պետք է սահմանված կարգով փոխեն հողերի նպատակային նշանակությունը, որը պահանջում է լրացուցիչ ծախսեր. հողերի նպատակային նշանակությունը փոխելուց պետք է վճարվի (թեկուզև մեկ տարվա ժամկետում) դրանց կադաստրային արժեքի տարբերությունը: Ներկայացվող նախագծով առաջարկվում է վերոնշյալ արտոնությունից օգտվող ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների համար օգտագործվող հողամասերի սեփականատերերի ցանկը լրացնել նաև գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունների սեփականատերերով՝ միաժամանակ այդ բոլոր սեփականատերերին ազատելով հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը համայնքային բյուջե մուծելու պարտականությունից:

Օրինագծի ընդունումը կնպաստի ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների համար օգտագործվող հողամասերի սեփականատերերի գործարար ակտիվության բարձրացմանը:

2.10. Տեղական ինքնակառավարման բնագավառի զարգացմանն ուղղված միջազգային համագործակցություն

2013 թվականի ընթացքում շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝

- ԳՄՀԸ-ի (GIZ) հետ՝ «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում:
- Ս.թ. հունիսի 19-ին կայացել է «Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում» թեմայով միջազգային համաժողովը, որը կազմակերպվել է Եվրոպայի խորհրդում Հայաստանի նախագահության շրջանակում: Համաժողովի ընթացքում քննարկվել են ԵՄ անդամ երկրներում տեղական մակարդակում մասնակցային ժողովրդավարության հետ կապված ներկա իրավիճակը, մասնակցային ժողովրդավարության դերը՝ տեղական իշխանությունների գործունեության արդյունավետության բարձրացման հարցում, տեղական մակարդակում մասնակցային ժողովրդավարության ամրապնդման ուղիները, կներկայացվելու է նաև ԵՄ անդամ երկրներում այս ոլորտում առկա դրական փորձը:
- Համաժողովի աշխատանքներին մասնակցել են Եվրոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի նախագահ Հերվիգ վան Շտաան, Կոնգրեսի երկու՝ տեղական իշխանության և տարածաշրջանների պալատների նախագահներն ու անդամները, ինչպես նաև Հայաստանի շահագրգիռ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, միջազգային և տեղական փորձագետները: Համաժողովի ընթացքում կազմակերպվել են քննարկումներ հետևյալ՝ «Արդյոք այսօր տեղական ժողովրդավարությունը հնարավոր է առանց ուղիղ մասնակցության», «Մասնակցային մոդել. ուղիղ և ներկայացուցչական ժողովրդավարության միավորում», «Էլեկտրոնային ժողովրդավարություն. քաղաքացիական մասնակցության նոր ձևեր» թեմաներով:
- ԵՄ աջակցությամբ իրականացվող Վրաստան-Հայաստան տարածաշրջանային համագործակցության ծրագիր շրջանակներում սկսվել են համատեղ գործողությունների ծրագրի (Join Operational Programme) մշակման աշխատանքները:

2013թ. սեպտեմբերի 27-ին Ուկրաինայի Հանրապետության մայրաքաղաք Կիևում կայացել է Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագրեր իրականացնող սահմանամերձ երկրների համագործակցության լավագույն փորձի ներկայացում: Սեմինարին մասնակցել են փորձագետներ Ուկրաինայի Հանրապետության կողմից, ներկայացուցիչներ Բելառուսի, Մոլդովայի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կողմից:

Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության այս ռազմավարությունը, որը մշակվել է ԵՀ-ի կողմից համագործակից երկրների հետ խորհրդակցությունների արդյունքում, ներկայացնում է Հայաստանի և Վրաստանի, Ադրբեջանի և Վրաստանի, Բելառուսի և Ուկրաինայի , Մոլդովայի և Ուկրաինայի միջև իրականացվելիք, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող տարածքային զարգացման ծրագրերի գերակայությունները, ներառման ենթակա շրջաններին ներկայացվող պահանջները, թիրախ խմբերը, ֆինանսական շրջանակը և կառավարման առանցքային հիմնահարցերը:

Սեմինարի ընթացքում մասնակիցներին ներկայացվել է Համատեղ գործառնական ծրագիրը (JOP), քննակվել են ծրագրի մշակման և հաստատման վերաբերյալ հարցեր: Սեմինարի ընթացքում քննարկվել են նաև հարցեր Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ տարածաշրջանների համագործակցության շրջանակի վերաբերյալ. վերջիններս քննարկվել են նաև 2013 թվականի հոկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության Ստեփանավան քաղաքում: Քննարկվել են հետևյալ թեմաները. «Գերակայություններ», «Գործառնական նպատակներ», «Սահմանամերձ շրջաններում տեղական համայնքների կենսապայմանների բարելավում», «Տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացում», «Համատեղ որոշումների ընդունման հանձնաժողովի գործառույթները»:

Տարածքային համագործակցության չորս ծրագրերի ընդհանուր բյուջեն կազմելու է 12.5 միլիոն եվրո: Այդ գումարի մինչև 7%-ը կծախսվի ծրագրի կառավարման վրա: Ստորև ներկայացված է տարածքային համագործակցության չորս ծրագրերի մոտավոր բաշխումը՝ ըստ մասնակից շրջանների բնակչության թվի, տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակի և ծրագրերի իրականացման կարողության:

ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության աջակցության ծրագրի» ֆինանսական շրջանակը.

Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագիր	**Հատկացվող բյուջե (միլիոն €)**
Հայաստան-Վրաստան	1.8
Ադրբեջան-Վրաստան	1.8
Բելառուս-Ուկրաինա	4.025
Մոլդովա-Ուկրաինա	4.0
Ընդամենը	**11.625**

- Եվրոպայի Խորհրդի երևանյան գրասենյակի հետ համատեղ ս.թ. նոյեմբերի 11-12-ին Երևանում կազմակերպվել են քննարկումներ, որտեղ ներկա եվրոպական փորձագետների կողմից ներկայացվել են իրենց երկրներում իրականացված վարչատարածքային բարեփոխումների մանրամասների, համայնքների խոշորացման ընթացքում առաջացած խնդիրների, դրանցից խուսափելու, բարեփոխումների իրականացման առավել նպատակահարմար ժամկետների, Հայաստանում հնարավոր խոշորացման մոդելների վերաբերյալ զեկույցներ: Այդ զեկույցում ներկայացված փորձագիտական առաջարկությունները հետագայում չափազանց կարևոր ուղեցույց կարող են հանդիսանալ Հայաստանում բարեփոխումների իրականացման ամբողջ ընթացքում:
- Ս/թ նոյեմբերի 26-28-ին Եվրոպայի Խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի մոնիտորինգային հանձնաժողովը այցելել է Երևան՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի շրջանակում տարածքային ժողովրդավարության և ապակենտրոնացման ոլորտներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների իրականացման ուսումնասիրման և անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով: Պատվիրակությունը հանդիպել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի հետ: Ա.Գևորգյանը պատասխանել է պատվիրակության անդամներին հետաքրքրող հարցերին, որոնք հիմնականում վերաբերում էին

Հայաստանում ապակենտրոնացման, տեղական ժողովրդավարության, համայնքների կարողությունների զարգացման խնդիրներին, վարչատարածքային բարեփոխումներին:

- Ս/թ դեկտեմբերի 12-ին, ՀՀ արտաքին գործերի նախարարության և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարության նախաձեռնությամբ Երևանում տեղի է ունեցել Եվրոպայի խորհուրդ – Հայաստան 2012-2014թթ. Գործողությունների ծրագրի իրականացմանը նվիրված հանդիպումը, որին մասնակցել են Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարությունում համապատասխան ծրագրերի պատասխանատուները՝ Ծրագրերի տնօրինության ղեկավար Վերենա Թեյլորի գլխավորությամբ և Հայաստանում ծրագրերին մասնակցող կամ դրանք համակարգող գերատեսչությունների ներկայացուցիչները: Հանդիպման նպատակն է եղել քննարկել ԳԾ իրականացման ընթացքը, ըստ անհրաժեշտության փոփոխել կամ արդիականացնել առկախված նախագծերը, առաջարկել նոր ծրագրեր:
- Գերմանական զարգացման բանկի (KfW), ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միջև 16.08.2011թ. կնքված եռակողմ ֆինանսավորման համաձայնագրով նախատեսված՝ Գերմանական զարգացման բանկի (KfW) ֆինանսական համագործակցության շրջանակներում 2012 թվականի հունիսի 29-ին կնքվել է «Վանաձոր քաղաքի Կոշտ Կենցաղային Թափոնների Համակողմանի Կառավարման համակարգի մշակման իրագործելիության հետազոտություն» ծրագրի խորհրդատվական պայմանագիր, որի համաձայն իրականացվել է «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգը», որը քննարկվել և համաձայնեցվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ:
- ԳՄՀԸ-ի (GIZ) հետ «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում ՀՀ թվով 60 համայնքներում ներդրվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ), այդ համայնքներին տրամադրվել է համակարգչային տեխնիկա և իրականացվել է ՀԿՏՀ-ն շահագործող համայնքային ծառայողների ուսուցում:

ՀՀ կառավարությունը, համագործակցելով Ասիական Զարգացման Բանկի հետ, Հայաստանում իրականացնում է «Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման ներդրումային ծրագիրը», որի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման նախարարության առաջարկով տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով ՔՈՎԻ (COWI) ինժեներական խորհրդատվական ընկերության ներկայացուցիչներից ձևավորված Խորհրդատուների թիմը մշակել և ներկայացրել է «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական զարգացման պլանը, ճանապարհային քարտեզը և երկարաժամկետ ներդրումային պլանը» հաշվետվությունը, կազմակերպվել են Հանրային քննարկման քննարկումներ Գյումրի և Վանաձոր քաղաքներում ՀԿ-ների, շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությամբ, որի արդյունքում «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական զարգացման պլանը, ճանապարհային քարտեզը և երկարաժամկետ ներդրումային պլանը» հաշվետվությունը Խորհրդատուների կողմից լրամշակվել է: Վերջնական հաշվետվության մեջ ներառված են աղբահանության իրականացման տարածաշրջանային աղբավայրերի 5 մոդելներ՝ տարբերակներ և ներկայումս քննարկման փուլում են ընտրության աշխատանքները, թե նշված տարբերակներից որն է տնտեսապես նպատակահարմար ՀՀ-ում իրականացնելու համար:

2.11. Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում համայնքներում

2013 թվականի ընթացքում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) ներդրվել է ևս 153 համայնքներում: Ընդհանուր առմամբ տեղեկատվական համակարգը ներկայումս շահագործվում է ՀՀ 496 համայնքներում: Տարվա ընթացքում թվով 242 ՏԻՄ-երում աշխատանքներ են տարվել էլեկտրոնային փաստաթղթաշարժի ներդրման ուղղությամբ, որոնց արդյունքում բոլոր 48 քաղաքապետարաններում և 309 գյուղապետարաններում (ընդհանուր թվով 357 համայնքներում) շահագործվող ՀԿՏՀ-ներն իրենց փաստաթղթաշարժի բաղադրիչի միջոցով հնարավորություն ունեն էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակելու պետական կառավարման մարմիններում շահագործվող փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգի հետ: Տարվա ընթացքում 117 համայնքներում գործարկվել են համացանցային պաշտոնական կայքեր, իսկ նման կայքեր շահագործող համայնքների թիվը 150-ն է:

2.12. Այլ միջոցառումներ

- Համայնքների վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացված միջոցների տնօրինման ծրագրին հավանություն տալու

վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագծեր (թվով 4)՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացվող միջոցների տնօրինման ծրագրերի իրականացում՝ ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098-Ն որոշման համապատասխան:

- Թվով 169 հողաշինարարական գործ ներկայացվել է «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» քննարկմանը, որից ՝

122-ը ստացել է դրական եզրակացություն,

14-ը ներկայումս քննարկվում է շահագրգիռ գերատեսչությունների հետ,

8-ը գտնվում է մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական կոմիտեում:

- ՀՀ կառավարության 14.01.2010թ. թիվ 16-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման վերաբերյալ.

թվով 14 հողաշինարարական գործեր ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարի համաձայնեցմանը, որոնցից ՝

11-ի վերաբերյալ տրվել են դրական եզրակացություններ,

3-ը լիազոր գերատեսչությունների հետ համաձայնեցման փուլում են:

- Տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրություններ նշանակելու և ֆինանսավորելու վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագծեր (թվով 18)՝ ՀՀ ընտրական օրենսգրքի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջների ապահովում:

- Վերջին տարիներին ՀՀ համայնքներից ստացվում են դիմումներ՝ համայնքներում հաշվառված քաղաքացիների անհատական հաշվառման տվյալների մասին տեղեկատվության տրամադրման համար միջնորդելու խնդրանքով: Համայնքի բնակիչների հաշվառման վերաբերյալ ամբողջական տեղեկատվության բացակայությունը խոչընդոտում է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացմանը (աղբահանության, սոցիալական ծառայության կազմակերպման, նախազորոկոչիկների հաշվառման բնագավառներում և այլն): Այդ իրավիճակը շտկելու նպատակով նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունմամբ կկանոնակարգվեն բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող տվյալները, դրանց ցանկը և ժամկետները:

- Ս.թ. հոկտեմբերի 3-5-ին Ջերմուկ քաղաքում անց է կացվել գյուղական համայնքների 3-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցել են պետական կառավարման մարմինների, համայնքների հետ աշխատող տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Յուրաքանչյուր մարզ մասնակցում էր մարզպետի գլխավորությամբ առանձին պատվիրակությամբ, որի կազմում ընդգրկված են եղել թվով տասը համայնքապետեր և ավագանու հինգ անդամներ:

Համաժողովի ընթացքում կազմակերպվեցին բանախոսություններ և քննարկումներ՝ հետևյալ 10 թեմատիկ աշխատանքային խմբերում՝

Թեմա 1. Տեղական ինքնակառավարման ոլորտ - «Վարչատարածքային բարեփոխումներ, համայնքների խոշորացման գործընթացը, տեսլականը և արդյունավետությունը, Հայաստանում համայնքների խոշորացման խնդիրները և լուծման առաջարկները, Համայնքների փնջային խոշորացման 14 ծրագրերի ներկայացում (բացի համաժողովին գրանցված մասնակիցներից մասնակցում են փնջերը ձևավորող համայնքի ղեկավարները և ավագանու անդամերը):

Թեմա 2. Ստուգումներ և վարչական հսկողություն - «Տեղական ինքնակառավարման մարմիններում պետական մարմինների կողմից իրականացվող ստուգումների (հսկողության, վերահսկողության) և վարչական հսկողության գործընթացի կանոնակարգում, վարչարարության հիմունքները և վարչական վարույթը համայնքներում»:

Թեմա 3. Գնումների գործընթաց - «ՀՀ համայնքներում գնումների իրականացման գործընթացի կանոնակարգում»:

Թեմա 4. Մրցակցային համայնք – «Համայնքների զարգացումը, մրցակցային համայնքի տեսլականը, համայնքների 4-ամյա զարգացման պլանները և դրանց իրավական կարգավորումները. Համայնքի զարգացման ծրագիրը՝ որպես համայնքի ռազմավարական պլանավորման գլխավոր փաստաթուղթ, մեթոդաբանություն»:

Թեմա 5. Շրջակա միջավայր - «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարում (ԱԶԲ – Ռազմավարական զարգացման պլան, ճանապարհային քարտեզ, երկարաժամկետ ներդրումային ծրագիր, KfW – Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման համակարգ), բարելավման ծրագրեր, խնդիրներն և լուծման առաջարկները»:

Թեմա 5՛. Շրջակա միջավայր - «Գյուղական համայնքների ներկա բնապահպանական իրավիճակը, բնական ռեսուրսները, բնության հուշարձանները, դրանց ներկա իրավիճակը, խնդիրները և լուծման առաջարկները»:

Թեմա 6. Զբոսաշրջություն, տնտեսական զարգացում - «Զբոսաշրջությունը որպես գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոն, համայնքային բրենդի ձևավորումը, զարգացումը և խթանումը, համայնքների մրցակցային առավելությունները, ներկա իրավիճակը, խնդիրները և լուծման առաջարկները»:

Թեմա 7. Գյուղատնտեսություն - «Գյուղատնտեսական քաղաքականությունը, օրենսդրական բացերը և անհրաժեշտ փոփոխությունները, գյուղացիական տնտեսությունների ներկա իրավիճակը, խնդիրները և լուծման առաջարկները»:

Թեմա 8. Տեղական ինքնակառավարման ոլորտ - «Համայնքի ավագանու գործունեությունը, թափանցիկությունը, իրավասությունների շրջանակը, «Ավագանու ինստիտուտ»-ի ձևավորումը, ընթացիկ խնդիրները և լուծման առաջարկներ»:

Թեմա 9. ՓՄՁ զարգացումը Հայաստանում - Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը և ներկա օրենսդրությունը, գործարարությունը տեղական մակարդակում, ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի աջակցությունը, գյուղական համայնքների զարգացման ծրագրի շրջանակներում լիզինգով տրակտորների և հարակից սարքերի տրամադրման ծրագրի ներկայացում»:

Թեմա 10. Հողերի կառավարում – «ՀՀ գյուղական համայնքներում հողային օրենսդրության պահանջներին համապատասխան վերահսկողության իրականացման ընթացքում առկա խնդիրների վերհանում և դրանց լուծման ուղիները»:

«ՀՀ տարածքում մասնավոր տնտեսվարողների կողմից անշարժ գույքի չափագրման աշխատանքների համար գանձվող վճարների չափը կանոնակարգելու հետ կապված խնդիրները»:

Միջոցառումը նպատակ ուներ տեղական ինքնակառավարման համակարգի և գյուղական համայնքների ամենաարդիական խնդիրների քննարկման, փորձի փոխանակման, իրականացվող ծրագրերի և քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը:

3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

3.1. Համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների գրանցամատյանի վարում

Նախարարության կողմից վարվում է համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների միասնական գրանցամատյան, որում ներառված են համայնքներից, կարգով սահմանված ձևերին համապատասխան՝ 6183 անձանց վերաբերյալ ստացված տվյալները: Գրանցամատյանի տվյալների համաձայն՝ 2013թ.-ի դեկտեմբերի 26-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնները 6752-ն են, որոնցից զբաղեցված են 6183–ը, կամ 92 %-ը: Համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանցից կանայք կազմում են 51.4%-ը, տղամարդիկ՝ 48.6%-ը: Հաշվետու ժամանակահատվածում օրենքով նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում մինչև 1000 բնակչություն ունեցող համայնքներում աշխատակազմերի քարտուղարների պաշտոնների անձնագրերում բարձրագույն կրթության և (կամ) աշխատանքային ստաժի չափանիշները չներառելու մասին համաձայնություն է տրվել միայն 10 համայնքների: Ընդհանուր առմամբ, մինչև 1000 բնակչություն ունեցող 441 համայնքներից համաձայնություն է տրվել 279 համայնքներին:

3.2. Վերապատրաստման գործընթացի իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում հերթական վերապատրաստումն անցել է 1390 համայնքային ծառայող, որից 966-ը՝ պետական բյուջեի, 424-ը՝ համայնքի բյուջեի (Երևանի՝ թվով 423, Վաղարշապատի՝ թվով 1, քաղաքապետարանների համայնքային ծառայողները): 2010 թվականից ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախաձեռնել է տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների վերապատրաստումը, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009–2012 թթ. միջոցառումների ծրագրի մի շարք կետերի կատարման արդյունավետության բարձրացմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղական ինքնակառավարման մարմիններից վերապատրաստվել են ընդհանուր առմամբ 754 համայնքի ղեկավարներ և ավագանիների անդամներ, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների 74 աշխատակից:

3.3. Համայնքային ծառայողների ատեստավորման և համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների անցկացման գործընթաց

Հաշվետու ժամանակահատվածում ատեստավորվել են թվով 730 համայնքային ծառայողներ: Ատեստավորման արդյունքներով 7 համայնքային ծառայող ազատվել են զբաղեցրած պաշտոններից՝ այդ պաշտոններին չհամապատասխանելու հիմքով:

Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել են 916 մրցույթներ, որոնցից կայացել են 602-ը կամ շուրջ 66%-ը: Հրապարակայնությունն ապահովելու նպատակով մրցույթների մասին հայտարարությունները տեղադրվել են նախարարության հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում: Մրցույթների մասին տեղեկությունները տրամադրվել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությանը:

3.4. Համայնքային ծառայության կադրերի ռեզերվ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցվել են 4 անձինք: Համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների կողմից կադրերի ռեզերվ 408 հարցում է կատարվել ավելի քան 1000-ից ավելի ժամանակավոր թափուր պաշտոններ ժամկետային աշխատանքային պայմանագրերով համալրելու համար, որոնց մասին կազմված հայտարարությունները տեղադրվել են նախարարության հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում: Հարցում արված պաշտոններից 5-ի համար կադրերի ռեզերվից ներկայացվել են համապատասխան թեկնածություններ, որոնց արդյունքում նշված անձինք օրենքով սահմանված կարգով հանվել են կադրերի ռեզերվից՝ նրանց հետ համայնքային ծառայության պաշտոններում ժամկետային աշխատանքային պայմանագրեր կնքելու հիմքով:

3.5. Համայնքային ծառայողների նկատմամբ ծառայողական քննությունների անցկացում

Հաշվետու ժամանակահատվածում նշանակվել է թվով 4 ծառայողական քննություն, որոնցից 3-ը նշանակվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, 1-ը՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների նկատմամբ:

Ծառայողական քննություններն իրականացվել են ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Համայնքային ծառայողի ծառայողական քննություն անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 1003-Ն որոշմամբ հաստատված կարգով և սահմանված ժամկետներում, որոնց արդյունքներով ընդունվել են համապատասխան իրավական ակտեր:

3.6. Կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողության իրականացում

Համայնքային ծառայության համակարգի ներդրման արդյունավետության բարձրացման նպատակով նախարարության կողմից «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35.2-րդ հոդվածի համաձայն՝ կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն է իրականացվել Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզերի թվով 80 քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերում (յուրաքանչյուր մարզում՝ 8-ական համայնք):

Նախարարության կողմից համայնքներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում Երևանի քաղաքապետին, ՀՀ մարզպետներին ու համապատասխան համայնքների ղեկավարներին ներկայացվել են հայտնաբերված թերությունները և դրանց վերացման համար անհրաժեշտ առաջարկություններ: ՀՀ մարզպետներին տրվել են հանձնարարականներ՝ նշված թերությունները վերացնելու, ինչպես նաև մարզերի մյուս համայնքներում նմանատիպ թերությունները բացառելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

4.1 ԵԽ նախարարների կոմիտեում ՀՀ նախագահության շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասով ստանձնած միջոցառումներ

4.1.1 2013թ. հունիսի 18-ին Երևանում տեղի է ունեցել ԵԽ տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի բյուրոյի նիստը:

Նիստի մասնակիցներին ողջունել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը՝ նշելով, որ Եվրոպայի խորհրդին անդամակցության տարիներին Հայաստանը ԵԽ-ի հետ ձևավորել է համագործակցության ուղղությունների ընդգրկուն փաթեթ, որտեղ մշտապես իրենց կարևոր տեղն են ունեցել տեղական ժողովրդավարության կայացմանն ու հետագա կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

ՀՀ փոխվարչապետը հրապարակել է նաև բյուրոյի անդամներին ուղղված ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ողջույնի ուղերձը:

4.1.2 2013թ. հունիսի 19-ին Երևանում մեկնարկել է «Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում» թեմայով միջազգային համաժողովը:

Համաժողովի աշխատանքներին մասնակցում էին Եվրոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի նախագահ Հերվիգ վան Շտաան, Կոնգրեսի երկու՝ տեղական իշխանության և տարածաշրջանների պալատների նախագահներն ու անդամները, ինչպես նաև Հայաստանի շահագրգիռ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, միջազգային և տեղական փորձագետներ: Համաժողովի ընթացքում կազմակերպվել են քննարկումներ՝ «Արդյո՞ք հնարավոր է այսօր տեղական ժողովրդավարությունը առանց ուղիղ մասնակցության», «Մասնակցային մոդել. ուղիղ և ներկայացուցչական ժողովրդավարության միավորում», «Էլեկտրոնային ժողովրդավարություն. քաղաքացիական մասնակցության նոր ձևեր» թեմաներով: Համաժողովը եզակի հնարավորություն էր մտորելու ուղիղ և մասնակցային ժողովրդավարության վերջին զարգացումների շուրջ և այն հնարավորությունների, որոնք թույլ են տալիս մեր երկրներում նորացնել և թարմացնել ժողովրդավարական գործընթացները: Համաժողովի արդյունքում Եվրոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի նախագահ Հերվիգ վան Շտաայի կողմից արվեցին ընդհանուր եզրակացություններ, որոնք ձևակերպվել են փաստաթղթում որպես «Երևանյան եզրակացություններ» և ներկայացվել Կոնգրեսի բյուրոյի նիստին:

4.2. Հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության հարցերով համատեղ աշխատանքային խմբի նիստ

2013թ. դեկտեմբերի 1-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում անցկացվեց Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի շրջանակում գործող միջտարածաշրջանային համագործակցության հարցերով հայ-ռուսական աշխատանքային խմբի երկրորդ նիստը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի և ՌԴ տարածքային զարգացման նախարարի տեղակալ Ս. Նազարովի համանախագահությամբ: Նշված նիստի ընթացքում քննարկվեցին երկու երկրների միջև միջտարածաշրջանային մակարդակով համագործակցության զարգացման հեռանկարներն ու ուղղությունները, այս մակարդակում իրավապայմանագրային դաշտի զարգացման հարցերը: Նիստի ավարտին համանախագահները ստորագրեցին արձանագրություն:

4.3 Երրորդ Հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողով

2013թ. դեկտեմբերի 1-3-ը Հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի անցկացման շրջանակներում Հայաստանի Հանրապետություն են ժամանել ՌԴ 19-ը սուբյեկտների պատվիրակություններ, որոնցից 6-ը՝ նահանգապետերի գլխավորությամբ: ՌԴ պատվիրակությունները հանդիպումներ են ունեցել ՀՀ բոլոր մարզերում համապատասխան գործընկերների հետ և քննարկել են համագործակցության զարգացման և խորացման հեռանկարները:

2013թ. դեկտեմբերի 2-ին Գյումրիում տեղի է ունեցել Հայ-ռուսական միջտարածաշրջանային երրորդ համաժողովի պլենար նիստը, որին մասնակցել են նաև ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը և ՌԴ Նախագահ Վ. Պուտինը, ովքեր հանդես եկան ելույթի խոսքերով: Համաժողովին մասնակցեցին երկու պետությունների պետական իշխանության կենտրոնական և տարածաշրջանային մարմինները, բիզնես կառույցները, հասարակական կազմակերպությունները, փորձագիտական և գիտական շրջանակները, զանգվածային լրատվամիջոցները ներկայացնող ավելի քան 600 մարդ: Համաժողովի ընթացքում մասնակիցները անդրադարձել են միջտարածաշրջանային առևտրատնտեսական և հումանիտար համագործակցության հետագա ընդլայնման, տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում, ինչպես նաև Եվրասիական տարածքում ինտեգրվելու գործընթացներում Հայաստանի և Ռուսաստանի փոխգործակցության հարցերին:

Դեկտեմբերի 3-ին Երևանում անցկացվել է հայ-ռուսական միջտարածաշրջանային ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին Հայաստանի 10 մարզերը և Ռուսաստանի 9 նահանգները, ինչպես նաև մասնավոր ընկերություններ: Ցուցահանդեսի նպատակն էր ներկայացնել մինչ օրս ունեցած ձեռքբերումները և քննարկել առաջիկա անելիքները՝ առկա ներուժը բացահայտելու և նոր ծրագրեր իրականացնելու նպատակով:

Միջոցառման շրջանակներում անցկացվել են նաև կողմերի համար մեծ հետաքրքրություն ներկայացնող կլոր սեղան - քննարկումներ՝ 9 ուղղություններով՝ սկսած էներգետիկայի և տուրիզմի ոլորտներից մինչև հեռահաղորդակցություն և տիեզերական տեխնոլոգիաներ:

4.4 Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողով

2013 թ. հոկտեմբերի 16-ին Վալանս քաղաքում Հայաստանի և Ֆրանսիայի ավելի քան 30 քաղաքների և ռեգիոնների պատվիրակությունների մասնակցությամբ կայացել է Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովը, որի բացմանը ելույթով հանդես է եկել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը: Համաժողովի ընթացքում կազմակերպվել է «Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության զարգացում. ներկայի և ապագայի խնդիրներ ու նպատակներ» թեմայով կլոր սեղան, ինչպես նաև՝ քննարկումներ «Զբոսաշրջություն», «Կրթություն և մշակույթ», «Տեղական տնտեսություն» և «Գյուղատնտեսություն» աշխատախմբերում: Համաժողովի աշխատանքների ավարտից հետո Հայաստանի պատվիրակության կազմում ընդգրկված մարզպետներն ու

համայնքների ղեկավարները մեկնել են գործընկեր համայնքներ և տարածաշրջաններ՝ տեղերում փոխգործակցության հեռանկարները և համագործակցության նոր հնարավորությունները քննարկելու համար:

5. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

2013թ. ընթացքում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ստացվել, մշակվել և «Mulberry» համակարգի միջոցով գրանցվել է 19521 մտից փաստաթուղթ, միաժամանակ ելից է եղել 8363 գրություն: 2013թ. ընթացքում ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի 2008թ. հրամանով հաստատված «ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգի» համաձայն՝ իրականացվել է 12 ընդունելություն, որին մասնակցել է 57 քաղաքացի:

6. ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

Հաշվետու տարում ՀՀ արխիվային գործի զարգացման 2013 թ. աշխատանքային ծրագրին համապատասխան՝ գործունեություն է ծավալվել ներքոնշյալ հիմնական ուղղություններով:

1. Արխիվային փաստաթղթերի ֆիզիկական վիճակի բարելավման և պահպանվածության ապահովման նպատակով վերանորոգվել-վերականգնվել է 375.142 թերթ արխիվային փաստաթուղթ (ծրագիր՝ 308.238), կարվել-կազմապատվել՝ 26.754 թերթ (ծրագիր՝ 22.577թ.):
2. Հաշվետու տարում պատասխան է տրվել քաղաքացիներից և կազմակերպություններից, այդ թվում՝ արտասահմանից ստացված 147 թեմատիկ և սոցիալ-իրավական բնույթի 28.851 հարցումի:
3. Համալրման աղբյուր և այլ կազմակերպություններից արխիվային պահպանության է ընդունվել 18.831 գործավարական, 14.821 անձնակազմին վերաբերող, 1.048 գիտատեխնիկական գործեր և անձնական ծագման 85.649 թերթ փաստաթուղթ: Համալրվել է նաև 3.179 պահպանման միավոր կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, որից 191 կինո, 2.909 ֆոտո և 79 ֆոնո փաստաթուղթ:
4. Շարունակվել է արխիվային փաստաթղթերի թվայնացման գործընթացը: «Հայաստանի ազգային արխիվ» ծրագրի համար թվայնացվել է 120 հազար պատկեր (էջ): Թվայնացվել է նաև 1.431 կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, որից 459 կինո, 627 ֆոտո և 345 ֆոնո փաստաթուղթ:
5. Տարվա ընթացքում արխիվն ունեցել է 571 ուսումնասիրող:
6. 2013թ. լույս են տեսել փաստաթղթերի և նյութերի 2 ժողովածու, 1 հանրագիտարան և 1 համացանկ՝
- «Հայերի ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ.1915» անգլերեն փաստաթղթերի ժողովածուն («Armenian Genocide by ottoman burkay – 1915. Testimony of Survivors» collection of documents),
- Հովսեփ Օրբելի (փաստաթղթերի ժողովածու),
- «Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր-Նախիջևանի թեմը, պատմական ուղի», հանրգիտարան ռուսերեն,
- «Հայերը Մոսկվայում, պատմական ուղի» խորագրով համանուն ցուցահանդեսի համացանկ:

Տպագրության են նախապատրաստվել «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտատեղեկատվական հանդեսի N 1 և N 2 համարները:

7. ՀԱԱ ցուցահանդեսներն ընդլայնել են իրենց աշխարհագրական սահմանները:

Կազմակերպվել են՝
- «Հայերը Մոսկվայում. պատմական ուղի» փաստաթղթերի և նյութերի ցուցահանդեսը (Մոսկվա),
- «Ղրիմի հայկական եկեղեցու պատմությունը» խորագրով արխիվային փաստաթղթերի և նյութերի ցուցահանդեսը (Երևան),
- Խորհրդային Հայաստանի պետական և կուսակցական գործիչ Անտոն Քոչինյանի ծննդյան 100-ամյակին (Երևան, Վանաձոր) նվիրված ցուցահանդեսներ,
- հասարակական-քաղաքական գործիչ Սիմոն Զավարյանի մահվան 100-րդ տարելիցին նվիրված ցուցահանդեսներ,
- Բերդ և Արթիկ քաղաքներում՝ այդ համայնքների պատմությանը նվիրված ցուցահանդեսներ:

8. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի ՀԲ էներգախնայողության ծրագրով 40 միլիոն դրամի աշխատանքներ են իրականացվել արխիվի վարչական, 2-րդ և կինոարխիվի շենքերում: Վերանորոգման աշխատանքներ են իրականցվել նաև արխիվի Սևանի և Թումանյանի տարածքային ներկայացուցչությունների զբաղեցրած տարածքներում:
9. 2013թ. պետբյուջեից ստացվել է 390. 5 միլիոն դրամ սուբսիդիա, 16,8 միլիոն դրամ դրամաշնորհ: Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված հասույթը կազմել է մոտ 87.2 միլիոն դրամ, որից 47.8 միլիոն դրամը ֆիզիկական անձանց մատուցված ծառայությունից (2012թ. այն կազմել է 38,2 միլիոն դրամ):